ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հասարակագիտություն առարկայի բովանդակության հիմնական բաղադրիչները, ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդներ:

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ **Մարգարիտ Մեսրոպյան**

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի թիվ 29 ավագ դպրոց Անդրանիկ Մարգարյանի անվան» ՊՈԱԿ

2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. «Հասակագիտություն» առարկայի ուսուցման նպատակներն ու խնդիրները
3. Հասարակագիտություն՝ առարկայի դասավանդման ընթացքում բաղադրիչների ինտեգրման հետ կապված խնդիրները
4. Եզրակացություններ և առաջարկություններ
5. Օգտագործված գրականություն

Ներածություն

Ժամանակն արագ առաջ է գնում՝ թելադրելով իր պահանջները, կյանքի բոլոր ոլորտներում կատարվում են լուրջ փոփոխություններ, որոնց չի կարող չարձագանքել դպրոցը՝ որպես հանրային կառույցներից մեկը: Եվ այդ փոփոխություններին, նոր իրողություններին անմիջապես արձագանքում է նոր սերունդը՝ այսօրվա սովորողը՝ կամային, նպատակասլաց, ինքնավստահ սովորողը: Այն սովորողը, որի և՛ հայացքներն են փոխվել, և՛ սկզբունքները, որն արդեն նոր արժեքների կրողն է և ուսուցչից պահանջում է համոզիչ, խելացի, անկեղծ պատասխան, որն այսօր շատ ուսումնական հարցերում արդեն գերազանցել է իր ուսուցիչներին:

Տեղեկատվական բազմաբնույթ միջոցներն անասելի մեծ հնարավորություններ են բացում երեխայի առջև, և այսօր դժվար կլինի բավարարել նրա հետաքրքրությունները, եթե կազմակերպվող ուսումնական գործունեությունը չքայլի ժամանակին համընթաց: Այլ պարագայում այն կվերածվի ուղղակի ձանձրալի գործընթացի: Իսկ ավագ դպրոցում սովորողի դեպքում այս ամենին գումարվում է նաև իր ընտրած (կամ իր համար ծնողների ընտրած) մասնագիտական կրթությանը պատրաստվելու խնդիրը: 12-ամյա դպրոցի 12-րդ դասարանը, ինչպես արդեն երկար ժամանակ 10-ամյա դպրոցի 10-րդ դասարանն էր, վերածվել է սովորողի կյանքից դուրս մի շրջանի, որտեղ նրա օրվա մեջ դպրոցն իրականում չկա (չի հաճախում, ձևական է հաճախում, չի սովորում, եթե պարապում է ռեպետիտորի մոտ, չի հասցնում շփվել դասընկերների հետ, եթե չի պարապում, զբաղվում է այլ հետաքրքրություններով և հանգիստ կարող է նաև այլ շրջապատում հայտնվել), թեև պարտավոր է համարվել այդ դպրոցի սանը, մինչև.... Անհեթեթ վիճակ է ստեղծվում. «պարապող»12-րդ դասարանցիները կտրվում են դպրոցի առօրյայից, հասարակական-մշակութային, անգամ ընտանեկան հարաբերություններից, իսկ հայաստանյան բուհական շեմերը հաղթահարելը տարեցտարի դառնում է ավելի հեշտ:

Դպրոցի ուսուցման կազմակերպման փոփոխությունները ողջունելի են և ճիշտ ժամանակին: Բնական է և օրինաչափ, որ սկզբում պիտի լինեին ինչ-ինչ բացթողումներ, կիսատ գործեր, որոնք անպայման կշտկվեն ժամանակին զուգընթաց: Ամեն նոր բան միշտ էլ իր ճանապարհը հարթում է՝ խոչընդոտներ հաղթահարելով: Այնուհանդերձ, որպես ավագ դպրոցի ուսուցիչ, ուզում եմ ներկայացնել մի քանի դիտարկում՝ ակնկալելով քննարկումներ, լրացումներ և կարծիքներ:

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման նպատակներն ու խնդիրները

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:

«...Ամենակարևոր բաները մեզ ոչ ոք չսովորեցրեց: Սովորեցինք այբուբենը, թվերը, բազմապատկման աղյուսակը, հին ու նոր պատմական իրողությունները, սակայն ոչ ոք չսովորեցրեց ինչպես հասկանալ դիմացինին, ինչպես պաշտպանել ինքդ քեզ, ինչպես ընկալել շրջապատող աշխարհում կատարվող բաները: Թողեցին, որ այս ամենը սովորենք ինքնակրթությամբ, կամ մեր սրտերի վրա ստացած վերքերով, իսկ վերքերը սպիներ են թողում...»:

Վարդգես Պետրոսյան

Գրողի վերոհիշյալ մտահոգությունը դարձել է արդիական, քանի որ հանրակրթության պետական կրթակարգում իր ուրույն տեղը գրավեց «Հասարակագիտություն» առարկան: Հասարակագիտության ուսուցումը անձին հնարավորություն է տալիս իր առջև ծառանալիք խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, այլ օգտագործել բոլոր հմտությունները, գիտելիքները ու արժեքային մոտեցումները, որոնք իրենն են դարձել դպրոցական նստարանից ավելի կարողունակ դառնալ: «Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը հենվում է ուսուցման սոցիալական, իմացական, անձնային զարգացման բաղադրիչների վրա:

Սոցիալական բաղադրիչ - «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ձեռք բերել սոցիալական իրականության մասին և դրանք կիրառել հասարակական տարբեր երևույթները բացատրելու գործընթացում:

Հասարակագիտությունը ներառում է իր մեջ մի շարք գիտություններ, որոնք ուսումնասիրում են հասարակական երևույթներն ու գործընթացները, բացատրում է սոցիալական երևույթները, հավաքելով և ամփոփելով դրանց մասին տեղեկատվություն, այն մեզ թույլ է տալիս կանխատեսել և ղեկավարել սոցիալական երևույթները:

Անձնային զարգացման բաղադրիչ – «Հասարակագիտություն» առարկան իր մեջ ներառում է հասարակության հետ առնչվող յուրաքանչյուր իրողություն, անհատին տալիս է ազատ մտածելու կարողություն, այն հնարավորություն է տալիս դատարկ միտքը բաց մտքով փոխարինելու: Քանզի մարդու միտքը նման է օդապարիկի այն աշխատում է, երբ բաց է: Ինքնին հասկանալի է, որ անձնականն առնչվում է անձին, հասարակականը կոլեկտիվին:Անձի զարգացման վարքագծի հիմքում նախ և առաջ ընկած են ինքնահարգանքը, ինքնուրույնությունը, կայանալու մղումը, այսպիսով անհատը ձգտում է հասարակական ճանաչման: Բազմաբաժին այս առարկան թույլ է տալիս անձի վերոհիշյալ նպատակները ազատորեն իրագործելու քննարկումների , բանավեճերի, բաց զրույցների միջոցով: Իմացական բաղադրիչ Այն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է, հնարավորություն ստեղծելով իրազեկվել որոնել և գտնել հուզող հարցերի պատասխանները և նրանց լուծման ուղիները: Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն ու առաջնորդությունը, հասարակության իդեալներին հասու լինելու և դրանց համար պայքարելու կարողությունն ու ցանկությունը և այլն: Մեր հասարակության քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուները, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ ու հասնել դրանց, պետք է ի վիճակի լինեն դիմակայելու արդի մարտահրավերներին, պետք է կարողանան ճիշտ ձևով տիրապետեն, օգտագործեն և տնօրինեն իրենց սեփականությունն ու եկամուտները, հստակ մեկնաբանեն ու դատողություններ անեն կատարվելիք իրադարձությունների մասին: Ավագ դպրոցում ‘Հասրակագիտություն’ առակայի մեջ ինտեգրված են յոթ առանձին բաղադրիչներ՝

1.գեղագիտություն

2.բարոյագիտություն

3.հոգեբանություն
4.տնտեսագիտություն

1. իրավագիտություն
2. քաղաքագիտություն

3. փիլիսոփայություն



Առաջին հերթին այս ոլորտների ուսումնասիրությունը «Հասարակագիտություն» առարկայի առանձնահատկություններից է:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ, վերջնական լուծումներ, ինչը հնարավորություն է տալիս սովորողների մոտ զարգացնել խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու, հետազոտական և նախագծային մոտեցումները կիրառելու հնարավորությունները:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում բաղադրիչների ինտեգրման հետ կապված խնդիրները.

Հասարակագիտական առարկաների ինտեգրված ուսուցումը մի գործընթաց է, որին բնորոշ են հետևյալ գծերը՝

1.Աշակերտներն ու ուսուցիչները համատեղ պլանավորում են գիտելիքի յուրացման ծրագիրը և սահմանում դրա իրագործման ընթացքը, գիտակցելով, որ ուսուցման համար պատասխանատու է ոչ միայն ուսուցիչը, այլև իրենք.

2. Ուսումնառության գործընթացի կենտրոնում սոցիալական տեսակետից նշանակալից թեմաներ են,որոնք բխում են աշակերտների հետաքրքրություններից և նրանց հուզող հարցերից.

3.Հեղինակապաշտական մոտեցումը իր տեղը զիջում է երկխոսությանը, բանավեճին, քննարկմանը.

4.Ներկայացվող հիմնախնդիրները ներկայացվում են տարբեր տեսանկյուններից՝ բաց հարցերի տեսքով, որոնք, իհարկե, չունեն միարժեք պատասխաններ, սակայն կյանքի ընթացքում հանդիպող երևույթներ են.

5.Ուսուցիչը աշակերտի հետ կատարում է հետազոտություն, որի ընթացքում աշակերտը ձեռք է բերում գործելաոճի փորձառնություն:

Բոլոր բաժիններում ներառված են հասարակական կարևորություն ունեցող և անհատին հուզող հարցեր: Հասարակագիտությունն այն ոլորտն է, որն իր մեջ պարունակում է հասարակության ժողովրդավարացման գործընթաց, քանի որ թե սովորողների , թե իրապես ուսուցանողների մեջ զարգացնում է առաջնորդման , մասնակցության , հանդուրժողականության , բախումների դրական հաղթահարման հմտություններ, հնարավորություններ տալիս արժևորելու մի շարք հասարակական իրողություններ ու կառուցելու սեփական գիտակցված մոտեցումը: Սակայն բաժինները շաղկապված չեն, միմյանց չեն լրացնում, ինչպես նաև չկա տրամաբանական շարունակություն: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնելիս օգտագործելգծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել: Այս առումով խնդիրներ են առաջանում հասարակագիտության ուսուցման ժամանակ, քանի որ հասարակագիտության բաղադրիչների մեջ տրամաբանական շղթան երբեմն կտրվում է, ուսուցումը դառնում է ոչ կապակցված: Օրինակ՝ 8-րդ դասարանի հասարակագիտության համեմատաբար շատ պարզ, նույնիսկ երբեմն այդ տարիքին ոչ բնորոշ պարզ շարադրանքից հետո 9-րդ դասարանում

աշակերտներին միանգամից առաջարկվում է դասանյութ, որը գրված է շատ բարդ, իրավաբանական տերմիններով հագեցած և նախորդ տարվա բաղադրիչի հետ գրեթե ոչ մի առնչություն չունեցող: Նույն սկզբունքով են կազմված նաև հասարակագիտության 10-12-րդ դասարանների բաղադրիչները:

Գեղագիտությունը գիտություն է գեղեցիկի մասին, թվում է թե անհրաժեշտ չէ ուսումնասիրել այս բաժինը և այն ավելորդ ծանրաբեռնվածություն է, սակայն հին ժամանակներում 'արժանապատիվ այրերը' բացի դիվանգիտությունից և ռազմական արվեստից պետք է տիրապետեին արվեստի որևէ բնագավառի ու ունենային հռետորական կարողություններ:Այսպիսով այս բաժինը օգնում է աշակերտին զարգացնել և ձևավորել գեղագիտական ճաշակ, սակայն բոլոր ուսումնական հաստատությունները չէ որ մոտ են որևէ գեղարվեստի կամ երաժշտական դպրոցի, կամ կարող են այցելել կինոթատրոն ու օպերա, ցուցահանդեսներ ու ճարտարապետական նշանավոր կառույցներ, որպեսզի ավելի իրական շփվեն արվեստի հետ: Բաժնի ուսումնասիրության արդյունքում սովորողը լավագույն դեպքում կարող է ձեռք բերել 'նոր տեսողություն', այսինքն՝ իրականությունն ընկալելու նոր ձև, որն էլ ավելի կլայնացնի նրա գիտակցությունը: Ցավոք, ճաշակի համընդհանուր անկումը այսօրվա հասարակության հիվանդ կողմն է, մարդը, որպես գեղեցկության ձգտող էակ, իր առջև խնդիր է դնում հասկանալ իրավիճակի պատճառները և դրանից դուրս գալու ելքերը: Բաժինն ավարտվում է, երբ սկսում ենք բարոյագիտություն բաժինը, կարծես մուտք ենք գործում նոր աշխարհ, քանզի լրիվ նոր երևույթի մասին է խոսքը, բարու ու չարի: Շարունակում ենք ավանդական մոտեցումներ կիրառելով արժեքային ուսուցում անցկացնել, բայց աշակերտի արժեքային կողմնորոշումները արդյունավետ չեն լինում, եթե նա չի արժևորում հայրենասիրությունն ու մարդասիրությունը, քանզի բաժնի մեջ ներմուծված տերմինները ընդամենը լրացնում են բարոյագիտությունթեմային:Ուսուցչի համար դժվար չէ ներկայացնել փոքրիկ թեմաները, սակայն այնքան պրիմիտիվ են, որ բացի դասագրքից անհրաժեշտ է կիրառել այլ աղբյուրներ, լրացնելու ու հարստացնելու և՛ դասապրոցեսը, և՛ աշակերտի մտահորիզոնը: Փնտրտուրքները շատ-շատ են:

Հենվելով բարոյական արժեքների վրա անձնականն ու հասարակականը փոխկապակցված են ու ձևավորում են արդի անհատի ներաշխարհը: Սակայն անցումը «հոգեբանություն» բաժնին, էլի առանց կապի առանց մտքերի տրամաբանակն շարունակության: Հոգեբանությունը

լայն ու բազմաճյուղ գիտություն է: Փոքրիկ այս բաժնի մեջ որոշ հիմնական հասկացություններ են ներառված բայց կենտրոնում մարդն է իր խառնվածքով, իր բնավորությամբ: Ըստ իր խառնվածքի ու բնավորության անձի մոտ պետք է կարողանաս դաստիարակել հանդուրժողականություն, պատասխանատվություն, պարտավորվածություն: Չնայած այս ամենի մասին խոսվել է նախորդ դասարաններում, ու քանի որ հիմնական դպրոցներում դասագրքերը տարբեր հեղինակների են, անհասկանալի է աշակերտը ունի արդյոք մոտավոր գիտելիք այս հասկացությունների մասին: Աշակերտը դժվար է զանազանում պարտականությունը պարտավորվածությունից ու պատասխանատվությունից: Իսկ այս ամենը ուսուցանելիս անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Իսկ ինչպես գրավել սովորողների ուշադրությունը: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն ու հիշեն: Մասնագետները խորհուրդ են տալիս ու ես այն օգտագործում եմ իմ դասապրոցեսի ժամանակ, նոր նյութը սովորեցնելիս օգտագործել գծապատկերներ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ թեմաներ, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:Այս առումով խնդիրներ են առաջանում հասարակագիտության ուսուցման ժամանակ, քանի որ հասարակագիտության բաղադրիչների մեջ տրամաբանական իմաստը կտրված է, այդ պատճառով ուսուցումը դառնում է ոչ կապակցված: Հենց ոչ կապակցված ու իրարից խիստ անջատ փաստ է հոգեբանությունից տնտեսագիտության անցումը: Ուսուցչի հայեցողությանն է թողնված կապակցումը, որովհետև աշակերտի մոտ հարցեր են առաջանում, թե ինչ կապ կա 'հասարակագիտության' վերջին թեմայի «Կոնֆլիկտները մարդու կյանքում» ու «տնտեսագիտության» առաջին թեմայի, այն 10 է «Տնտեսագիտության ելակետային հասկացությունները» միջև: Պիտի ուսուցիչը հմտորեն կարողանա գտնել կապակցում, տրամաբանական հաջորդականություն: «Տնտեսագիտություն» բաղադրիչը և՝ դասագրքում ներառված է, և՝ առանձին դասավանդվում է: Խնդիրը կայանում է նրանում, որ թեմայի մեջ ոչ ժամանակակից տվյալներ են: Ուսուցիչը պետք իրազեկված ու անպայման ուսումնասիրած լինի տվյալ ժամանակաշրջանի տնտեսական համակարգը, օրինակ նվազգույն պարենայինն զամբյուղ, աղքատության շեմ, նվազագույն աշխատավարձ:

Պետք է այնպես մատուցել առարկան, որ սովորողները կարողանան կարևորել շուկայական տնտեսության նշանակությունը հասարակական կյանքում, հասկանան թե ինչպես են գործում շուկայի օրենքները: Սովորողներին պետք է հասկացնել և՝ սեփական, և՝ պետական բյուջեների ձևավորման գործընթացները: Բարդությունը կայանում է նրանում, որ աշակերտը տեսականը, կարծես, հասկանում է, սակայն առօրյայում չի կարողանում օգտագործել: Հասկանում է, թե ինչ գործառույթ է կատարում բանկը, ինչ է վարկը, սակայն որոշ ժամանակ անց, մոռանում է, ենթագիտակցության մեջ չի պահպանում: Ինձ թվում է, այս ամենի պատճառ չափից ավելի հասարակագիտական նոր տերմիններն են, որոնք ուսումնասիրում ենք 10-րդ դասարանում:

Վերջին ներառված հասարակագիտական բաղադրիչը «ֆինանսական կրթության բաղադրիչն» է, որը ստիպում է ուսուցչին անպայման դասապրոցեսում անդրադառնալ 10 սկզբունքներին՝

1.Ֆինանսական կրթությունը որպես կյանքի հմտություն

2.Փողի՝ որպես գործիքի ընկալում

3.Պատասխանատու որոշումներ

4.Ակտիվ ուսուցում/ուսուցման կապը կյանքի հետ/

5. Ազդեցության մասշտաբի էֆեկտ

6.Զուգահեռ ինտեգրում

7. Համակարգային մոտեցում

8. Նվազագույն կոմպետենցիաներ/կարողունակություններ/

9.Շարունակականություն

10.Աստիճանական աճ/պարզից բարդին անցում/:

Այսօրվա աշակերտը վաղվա քաղաքացին է, իր ընտանիքի, իր երկրի տերն ու ճակատագիր որոշողը: Ուստի, Ֆինանսական կրթություն իրականացնող ուսուցիչը պարտավոր է սովորեցնել աշակերտին ցանկացած նոր գիտելիք ձեռք բերելիս քննի, ուսումնասիրի, վերլուծի, խմբավորի, հիմնավորի... Գիտելիքը, որն աշակերտը ձեռք է բերում ակտիվ գործունեության, գործնական կիրառման, փորձարկման, հիմնավորման արդյունքում, այն հիմնավոր է և չի մոռացվի: Չպետք է մոռանանք, որ ուսուցիչը կարող է սովորեցնել այնքան ժամանակ, քանի դեռ ինքն է սովորում:

XI դասարանի դասագիրքը, որը ներառում է «Իրավունքի հիմունքներ» և «Քաղաքագիտություն» բաղադրիչները, խիստ տարանջատված են նախորդ տարվա դյուրըմբռնելի դասագրքից:

Քանզի դասգիրքում ներառված են նույնիսկ ակադեմիական մակարդակի նյութեր: Դիտարկենք մի քանի փաստ: Իրավական գիտելիքները արդի քաղաքացու համար անհրաժեշտություն է: Քանզի օրենքների իմացությունը, մարդու իրավունքների գերակայությունը արդի հասարակության առաջնորդման հիմքն է: Այստեղ էլ բախվում ենք մի շարք խնդիրների: Առաջին հերթին դասագրքի հրապարակման տարեթիվը հուշում, որ ՀՀում խառը նախագահական հանրապետություն էր: Այս յոթ տարիների ընթացքում փոխվել են, և՝ Սահմանադրությունը, և՝ կառավարման ձևը, և՝ փոփոխություններ են եղել դատական համակարգում, փոխվել են նաև շատ օրենքներ: Այս ամենը աշակերտին մատուցվում է համակարգչային դասերի միջոցով: Ուսուցիչը փնտրտուքների մեջ է լինում, աշակերտը՝ նույնպես: Ավելի շատ հարցադրումներ լինում են այս բաժնի ուսումնասիրման ընթացքում:

Դատական համակարգում կան վրիպումներ, մի դասում գրված էմի բան, մյուսում նույն բանը ուրիշ կերպ է տարանջատած:պետք է շատ հմուտ լինել որպեսզի հասկանաս ենթատեքստը: Էջ 76-ում գրված է՝ «...վարչական դատարանի ակտերը ենթակա չեն վերաքննության...», սակայն 2009թ. ընդունվել է, նոր օրենք, որով վարչական ակտերը բերաքննման ենթակա են: Նման շատ-շատ վրիպումներ ու նոր ի հայտ եկած փաստեր ուղղված չեն: Դասագիրքը անհրաժեշտություն ունի վերահրատարակվելու, և գուցե լիովին փոխելու: Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը: Իսկ ակադեմիական բարդության այս դասագրքում այնքան հիշելու իրավաբանական տերմիններ, քաղաքական դեպքեր, նյութեր կան: Ուսուցիչը պետք է լավ իրազեկված լինի, ինչպես նաև նախօրոք ուսումնասիրած նոր երևույթներն ու փաստերը, որպեսզի բավարարի արդի աշակերտի հետաքրքրությունը:Նորագույն ժամանակները նոր խնդիրներ են առաջ բերում մարդու՝ որպես իրավական էակի առջև: Իրավունքը ապահովելու համար մարդիկ ստեղծել են օրենքը, որն էլ իր զարգացման ընթացքում ավելի ու ավելի ահագնացող չափեր է ընդունել, որոշ դեպքերում նույնիսկ դարձել է մարդու իրավունքների ոտնահարման գործիք: Մ. թ. ա. 6-րդ դարի փիլիսոփա Լաո Ցզին տեղին է ասել. «...Որքան շատ օրենքներ ու կարգադրություններ հրապարակվեն, այնքան կշատանան գողերն ու ավազակները...»:

Մեր նախնիները նկատել են, որ ոչ մի կենդանի առանց բացառիկ անհրաժեշտության չի հոշոտում իր ցեղակիցներին: Միայն մարդն է, որ դարեր ի վեր ոչնչացրել է իր նմանին: Արդի աշխարհի թշնամության ու լարվածության մտնոլորտում դասավանդել «քաղաքագիտություն» չափից ավելի դժվար է: Աշակերտի մոտ հսկայական հարցեր են առաջանում, որոնց պատասխանները կամ գոյություն չունեն, կամ լավագույն դեպքում կան, բայց ուսուցիչը իր վարկածն է առաջ քաշում, քանզի այլ ելք չի մնաում:Արդեն երկու տարի և ավել յուրաքանչուր հարց հստակ պատասխան չի ունենում, քանի որ ոչ մարդասիրական կազմակերպությունները, ոչ հարևան անբարիացկամ երկրները և ոչ էլ մենք ոչ մի ելք չենք կարողանում ստեղծել, գուցե և գտնել խաղաղության հասնելու համար: Քաղաքագիտությունը բարդ ու փոփոխական գիտություն է, նամանավանդ հիմա:

«Փիլիսոփայությունը գիտությունների գիտությունն է և արվեստների արվեստը (Դավիթ Անհաղթ)»:

Ինձ թվում է «փիլիհիսոփայության» բաղադրիչը ամենահաջողվածն է, քանի որ այն կյանքն արժանապատիվ ապրելու արվեստ է: Նյութերն ու հարցադրումները տեղին են, թեմաները մատչելի ու արդիական:Կան մի քանի դիտարկումներ:

Այս բաղադրիչը ուսումնասիրելիս անհրաժեշտ է հստակ նպատակ դնել, լսել աշակերտին, հնարավորինս զարգացնել նրա խոսքի մտքի ինքնուրույնությունը: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է դասը արդյունավետ կազմակերպել և անցկացնել: Դասագրքում կան համապատասխան նյութեր ու թեմաներ, սակայն խնդիրը նրանում է, որ օրինակները որոնք ներկայացված են դասագրքում արդիական չեն: Անհրաժեշտություն է լինում ներկայացնել արդիական թեմաներ: Այս տարիների ընթացքում նկատել եմ սովորողների մոտ ինքնուրույն մտածողութան, վերլուծական մտքի, պատմական, քննադատական մտածողության բացակայություն: Եվ առաջնահերթ եմ համարում սովորողների մոտ զարգացնել քննադատական մտածողությունը: Քննադատական մտածողության կիրառությունը պարտադիր պայման է որակյալ կրթական համակարգի ապահովման, ինչպես նաև բարելավման և զարգացման համար:Օրինակները պետք է օգնեն զարգացնել սովորողների մոտ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտությունը , որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Թեման շատ արդիական է, դասագիրք- ուսուցիչ- աշակերտ կապի նպատակն է ուսուցման գործնթացը դարձնել այնպիսին,որ սովորողները դառնան այդ

գործընթացի ակտիվ մասնակիցներ: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են ավելի անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում է հետաքրքրություններ և կարողություններ:

«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ Է, ԻՍԿ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՍԱՀՄԱՆ Է ՈՒ ԴՐԱՆ ՀԱՍՆԵԼԸ, ՀԱՄԱՐՅԱ ԱՆՀՆԱՐ»:

Ավանդական և ժամանակակից մեթոդներ (տեխնոլոգիա)

Աճող սերնդի կրթվածության և արժեհամակարգի ձևավորվածության ցուցանիշը պայմանավորված է մանկավարժների մեթոդական-մասնագիտական պատրաստվածության, դասավանդման կարողությունների և հմտությունների որակով: Ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման երաշխիք է ուսուցիչի խորագիտակության և ձեռնհասության (կոմպետենտության) աստիճանը. գործընթացի ճշգրիտ պլանավորումը, կազմակերպումը, գիտելիքի փոխանցման, դրա ինքնուրույն ձեռքբերման ուղիների մատնանշումը, սովորողներին կենսականորեն անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձևավորվածությունը փաստում են մանկավարժական համակարգված գործունեության մասին:

Մանկավարժական տեխնոլոգիաների, ինտերակտիվ մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախանշել դասավանդման արդյունավետության ապահովման բնութագրիչները: Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները:

Մեթոդներն ու տեխնոլոգիաները կիրառելիս հաշվի ենք առնում, որ աշակերտների թվում կան այնպիսիները, որոնք ունեն այս կամ այն խնդիրները:

Նախ նշենք, թե ինչ է իրենից ներկայացնում մանկավարժական տեխնոլոգիան և մեթոդը, այնուհետև որոշենք թե դրանցից որոնք են առավել նպատակահարմար:

Մանկավարժական տեխնոլոգիան այսօր առավելապես ընկալվում է որպես ուսումնական աշխատանքի ճշգրիտ նախագծում և այդ նախագծի հստակ կիրառում, որի արդյունքում ամպայմանորեն հասանելի են դառնում նախագծված արդյունքները: Մանկավարժական տեխնոլոգիաները ներառական կրթության համար անհրաժեշտ են, որպեսզի ուսուցիչը կարողանա նախագծի և մշակի ուսուցման և դաստիարակության նպատակները, ուսուցման ընթացքում կարողանա կիրառի դիդակտիկական, տեխնիկական նյութեր:

Ավանդական տեխնոլոգիաները, ինչպես և դա երևում է անվանումից չափազանց հին պատմություն ունեն: Դրանք մշակվել են շատ վաղուց և դարեր շարունակ համարվել են ուսուցման հիմնական ձև: Այս

տեխնոլոգիաների իմաստն է նոր նյութի հաղորդումը, նոր նյութի ամրապնդումը, գիտելիքների, կարողությունների ստուգումը և գնահատումը: Ուսուցման ավանդական տեխնոլոգիաների հիմնական նպատակն է որոշել գիտելիքների այն հանրագումարը, որը բավարար է նրա հետագա կենսագործունեությունը ապահովելու համար: Այդ նպատակի իրականացման համար կիրառվում են ուսուցման խոսքային և զննական մեթոդները: Արդյունքում գնահատվում է ուսումնական նյութի վերարտադրումը սովորողների կողմից:

Ուսուցման այս տեխնոլոգիան կրթության մեջ ներդնելիս կունենա իր դրական և բացասական կողմորը, մենք նշել ենք մի քանիսը, դիտարկենք այդ կողմերը:

Առավելություններն են.

•Այն ժամանակային տեսակետից խնայողական է

•Ուսումնական նյութը տրվում է մատչելի, որը նպաստում է աշակերտների ընկալմանն ու յուրացմանը, կառավարելի է գրեթե բոլոր փուլերում

•Այն բավականին լավ է հարմարվում նոր մեթոդների և տեխնոլոգիաների հետ:

Թերություններն են.

•Այն քիչ է նպաստում սովորողների կողմից ինքնուրույն գիտելիքների ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը

•Թույլ է զարգացնում սովորողների մտածողությունն ու ստեղծագործական հնարավորությունները

•Անհատականացված չէ և ուղղված չէ սովորողների բնածին ընդունակությունների և օժտվածությունների զարգացմանը:

Մյուս՝ մեզ հայտնի մանկավարժական տեխնոլոգիան համագործակցության մանկավարժական տեխնոլոգիան է:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան իմաստավորվում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտերի զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը:

Այս տեխնոլոգիայի համար հիմք են հանդիսացել ամերիկացի հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուիի, ռուս հոգեբան Լև Վիգոտսկու և շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեյի աշխատությունները:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի՝

1. ուսումնական նյութի նախապատրաստում
2. աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին
3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը

Իմ կարծիքով սա այն տեխնոլոգիաներից է, որի ներդրումը ներառական կրթություն կարևոր պայման է հանդիսանում:

Աշակերտների զույգերով, պմբերով աշխատելը ևս կնպաստի նրան, որ թույլ կարողություններով երեխան կաշխատի և կհամագործակցի առավել բարձր կարողութուններով աշակերտի հետ և աջակցություն կստանա վերջինիս կողմից: Հայտնի է, որ խմբակային կամ զույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին՝ նպաստելով գիտելիքների ձեռ բերմանը:

Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է՝

•ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների

•լրացուցիչ նյութի ընտրություն

•թիմային աշխատանքի տեսակի ընտրություն

Աշակերտների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման փուլում կատարվում է՝

•Ուրիշին լսելու կարողությունների ձևավորում

•Ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում

•Սեփական կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում

•Անհրաժեշտ ինֆորմացիա հայթայթելու կարողությունների ձևավորում

•Մտապատկերը խոսքի միջոցով արտահայտելու և բանավոր խոսքը մտապատկեր դարձնելու կարողությունների ձևավորում

•Վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունների ձևավորում

•Եզրահանգումներ կարատելու կարողությունների ձևավորում և այլ:

Ուսուցման գործընթացում, բացի մեթոդից, կիրառվում է նաև հնարը, որը ուսուցման մեթոդի բաղկացուցիչ մասն է, նրա մի կողմը, տարրը: Յուրաքանչյուր մեթոդում կարելի է առանձնացնել բազմաթիվ հնարներ: Ուրեմն, մեթոդը հնարների միագումար ամբողջությունն է: Ուսուցման

գործընթացում մեթոդին կարող է փոխարինել հնարը, հնարին՝ մեթոդը: Դա կախում ունի ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, , սովորողների ռեալ ուսումնական ու տարիքային հնարավորություններից և այլ հանգամանքներից: Ուսուցման մեթոդների ու հնարների հիմնական խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները:

Բացի մեթոդից ու հնարից, ուսուցման գործընթացում կիրառվում է նաև ուսուցման միոցը: Մեթոդը, հնարը և միջոցը փոխկապակցված են: Դա էլ հենց նրանց դիալեկտիկական կողմն է: Ուսուցման միջոցներ կարող են համարվել ուսումնական առարկաները, դասագրքերը, ձեռնարկները, դիտազննական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոցները և այլն:

Տեղին է նշել, որ մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է առանձին հնարների, մեթոդների համալիր կիրառման համակարգով: Ողջ մանկավարժական գործընթացը նպատակաուղղված է տարաբնույթ խնդիրների լուծմանը, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է խնդրին համապատասխան նպատակային մեթոդների մշակում և կիրառում: Ընդ որում, ինչպես Յ. Ա. Կոմենսկին է նշել, ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի մեթոդ կիրառողը կարողանա սահմանել հստակ նախանշված նպատակներ, այդ նպատակներին հասնելու հստակ միջոցներ, ինչպես նաև որոշոկի կայուն կանոններ, թե ինչպես կարելի է այդ միջոցները դրված նպատակներին հասնելու համար:

Ուսուցման մեթոդները ուղղված են կրթության որակի բարձրացմա խնդրի լուծմանը, որն իրականացվում է տարբեր ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարական միջոցների օգնությամբ:

Ուսուցման մեթոդներին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ.

1. յուրացման ենթակա նյութի կամ տեղեկատվության մշակում, խտացում և համակարգում,
2. հստակ, հաջորդական դիդակտիկական սկզբունքներով մշակված նպատակների առկայություն,
3. ուսուցման և դաստիարակության ախտորոշիչ գործառույթի ընդգծում,
4. ուսուցման բարձր որակի երաշխիք:

Մանկավարժական գործընթացում ուսուցման յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում պետք է նկատի ունենա ուսուցման մեթոդի՝

1. գործադրման մակարդակը,
2. փիլիսոփայական հիմնավորումը,

3. գիտելիքների յուրացման առաջատար հայեցակարգը,
4. կրթության բովանդակության բնույթը,
5. ուսուցման կազմակերպման ձևերը,
6. ուսուցման կազմակերպման գերակշռող մեթոդը,
7. սովորողների որակական հատկանիշները:

Կարևոր է նպատակադրումը՝ այսինքն ինչ նպատակի համար և ինչ արդյունք ստանալու համար է իրագործվում ծրագիրը: Նպատակից է կախված ընտրվող տեխնոլոգիայի բնույթը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, կարելի է ասել, որ ուսուցման մեթոդներն ուսուցչի կողմից սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակներն են՝ միտված անձի կրթությանը և զարգացմանը՝ ըստ առաջադրված խնդիրների:

Ժամանակակից մանկավարժական գործընթացի կազմակերպմանն առաջադրվող նոր խնդիրների լուծման նպատակով տարբեր որոնողական աշխատանքներ են իրականացվում, որոնք ուղղված են նոր մեթոդների, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևերի և տարբեր միջոցների ուսումնասիրությանը, փորձարկմանը և տարածմանը:

Նշված խնդիրների համատեքստում, մակավարժական գործունեության լիարժեք արդյունքին հասնելու համար, ուսուցչից պահանջվում է նպատակի ձեռքբրում ապահովող նպատակահարմար կամ օպտիմալ ուսումնադաստիրակչական մեթոդների ընտրություն, ընտրված տիպային մեթոդների անհատականացում՝ հաշվի առնելով մանկավարժական գործունեության սուբյեկտի առանձահատկությունները, պահանջմունքները, սուբյեկտի պրոֆեսիոնալիզմը, կարողությունները և մեթոդների իրականացման պայմանները: Այս ամենին հաջորդում է մեթոդների իրականացման փուլը, որի ժամանակ ուսուցիչը կատարում է ուսուցման մեթոդների իրականացման արդյունավետության գնահատում և մեթոդների իրականացման սկզբում կանխատեսված, նախանշված ու մեթոդների կիրառումից հետո ձեռք բերված արդյունքների համեմատում, մանկավարժական աշխատանքին համապատասխան գնահատում:

Ուսուցումը հասարակության կողմից հատուկ կազմակերպված, մանկավարժական առաջնային նշանակություն ունեցող գործընթաց է, որի էական հատկանիշները պայմանավորված են այդ գործընթացի երկկողմանիության իրողությամբ, երեխայի մտավոր, անձնային զարգացումն իրականացնելու, զարգացման արդյունավետ տեմպ հաստատելու, կրթվածության որոշակի մակարդակ ապահովելու նպատակադրմամբ:

«Ուսուցումը բնորոշելիս կարևորվում է հատկապես «ինչպե՞ս սովորեցնել» հարցին ուշադրություն դարձնելը, քանի որ ուսուցման ողջ գործընթացի արդյունավետությունը դրական իմաստով պայմանավորվում է այդ հարցի պատասխան դարձած ուսուցման մեթոդների տեսությամբ»:

Դաստիարակությունը մանկավարժական գիտության հիմնական հասկացություններից է, այն որոշիչ է գրեթե բոլոր մանկավարժական ըմբռնումներում և որպես մարդու գիտակցական կազմակերպված գործունեություն՝ նույնպես ունի էական հատկանիշներ: Դրանք պայմանավորված են նպատակաուղղվածությամբ ու կազմակերպվածությամբ, գործընթացի երկկողմանիությամբ, հասարակության մեջ:

Ուսումնադաստիարակչական գործընթացի մեթոդների ընտրությունը կախված է մի շարք չափանիշներից՝ ուսումնադաստիարակչական ընդհանուր նպատակներից, իրականացման համար անհրաժեշտ ժամանակից ու պայմաններից, ուսուցչի գործիմացությունից և այլն:

Մեթոդի ընտրության և կիրառման խնդիրը բազմակողմ է և բազմագործոնային: Ուսուցիչը, որն ունի իր գործելաոճը կիրառում է մեթոդը՝ առաջնորդվելով իր սեփական արժեքներով, ապրումներով, տրամադրություններով, ակնկալիքներով ու սպասումներով:

Մեթոդի ընտրության հարցում պակաս կարևոր չէ սովորողի դերը, որն օժտված է ժառանգականությամբ և բացառիկությամբ, ունի անհատական առանձնահատկություններ և կրում է սոցիալական միջավայրի ներգործություններն ու ազդեցությունները:

Յուրաքանչյուր ուսումնադաստիարակչական գործընթաց ունի զգայական-դիտողական, մտավոր կարողությունները զարգացնող, բարոյական որակները, կամքը ձևավորող, կրթող ու դաստիարակող կողմեր, որոնք բոլորն էլ կարևոր են և ապահովում են երեխայի անձի զարգացումը: Մեթոդի ընտրության գործում գլխավոր է դառնում դրանց փոխկապվածության հարցը, որը կարող է ապահովել արդյունավետ, ներդաշնակ, ազդեցիկ հարաբերումներ ինքն իրեն, սոցիալական միջավայրի և հասարակության հետ: Դա նշանակում է դաստիարակության նպատակների մեջ ամփոփված են անձնավորության «ես»-ի զարգացումը, մարդուն քաղաքացի դարձնելու, նրան հասարակական կյանքին ինտեգրելու, մարդուն աշխատել և ապրել սովորեցնելու գաղափարներն ու մոտեցումները:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է ասել, որ մեթոդը մեր քննարկման համատեքստում ուսումնադաստիարակչական գործընթացի օբյեկտների և սուբյեկտների գործունեությունը կարգավորող ճանաչողական սկզբունքների, միջոցների, մոտեցումների, հնարքների ամբողջություն է, որի

ընտրության հարցում առանձնահատուկ տեղ ունեն նաև ուսումնական դասագրքերի կառուցվածքը, բովանդակությունն ու նյութի շարադրանքը:

Ուսուցման մեթոդների և հնարների թվարկում

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Դասը սկսելու մի քանի հնարների թվարկում.

1. Խոհրդատվություն՝

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են որպե առաջ բացահայտել գաղտնիքը: Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.



2. Գուշակություն

3. Զարմանք, անսպասելիություն

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

4. Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հատկապես հասարակագիտության դասերին՝ Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է... Երվանդ Քոչար Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում: Մենք կարծում ենք, որ բարոյական

հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա... Դեյվիդ Հյում Դարաշրջանի կարևոր հարցերը լուծվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ: Օ. Բիսմարկ Ինձ երբեք ծանոթ չի եղել մի բառ՝ հանձնվել: Հաղթողին երբեք ոչ ոք չի հարցնում արդյոք նա ճի՞շտ էր, թե՞ սխալ: Մարդկանց կառավարելու երկու ուղի կա՝ անձնական շահ և փող: Գեներա՛լ, դուք ինձնից ուղիղ մի գլուխ բարձր եք, բայց եթե շարունակեք ինձ հակաճառել, ապա ես անհապաղ կվերացնեմ այդ տարբերությունը:

Այս մտքերից մի քանիսի հեղինակները դասի սկզբում չեն նշվում: Միայն դասի ավարտին են աշակերտներն իմանում, որ խոսքերի հեղինակն իրենց կողմից որոշակիորեն կոնկրետ վերաբերմունքի արժանացած Ա. Հիտլերն է կամ Նապոլեոն Բոնապարտը:

5. Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը



6. Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր

տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը:

7. Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Հասարակագիտություն առարկայի խնդիրներն ու նպատակները, հանգեցինք այն եզրակացության, որ «Հասարակագիտությունը», որպես ամենաբազմազան բաղադրիչներ ունեցող առարկա, պետք է ուշադրության կենտրոնում լինի, քանզի նա իր մեջ արծարծում է թեմաներ, որոնք խիստ արդիական են: Շատ կարևոր է, որ 2023թ. հրապարակվելիք դասագրքերում հաշվի առնվեն բարձրացված խնդիրները:Բնականաբար, բոլոր դասագրքերին համապատասխան կլինեն ուսուցչի ձեռնարկներ, ուսումնաօժանդակ նյութեր, որպեսզի ուսուցիչն ավելի հստակ եղանակներով և մեթոդներով հասնի սահմանված վերջնարդյունքների իրականացմանը:

Հաջորդ կարևոր եզրահանգումը կլինի հետևյալը, հասարակագիտության բաղադրիչների մեջ ճիշտ է ըստ նոր դասագրքերի առանձնացված բաժիններ չկան, սակայն թեմաները մեկը մյուսին պետք է և՛ լրացնի, և՛ պետք է լինի տրամաբանական շարունակություն, չպետք է լինեն խիստ տարանջատումներ, պետք է ուսումնական նյութը լինի կապակցված, որպեսզի և՛ հասկանալի լինի և՛ պահպանվի սովորողների երկարատև հիշողության մեջ:

Ուսումնառության ընթացքում բախվում ենք ևս մեկ մտահոգիչ խնդրի, դպրոցներում «Հասարակագիտություն» առարկան հիմնականում դասավանդում են հարակից առարկաների մասնագետները, ովքեր միշտ չէ, որ տիրապետում են հասարակագիտությանը բնորոշ առանձնահատկություններին: Հարակից առարկաների մասնագետները հաճախ ուսումնական նյութն ամբողջ խորությամբ չեն մատուցում:

Դասապրոցեսի ընթացքում միջառարկայական կապերն ապահովելիս տուժում է հասարակագիտական ոլորտը: Այս առումով շատ ճիշտ են մտածել, որ «Հասարակագիտություն» առարկայի վերապատրաստումները, սեմինարները դարձրել են առավել բովանդակալից, առարկայական, ամենակարևորը՝ այլ առարկաներից անջատ: Այս ամենը կնպաստի ուսուցիչների որակական հատկանիշների բարձրացմանը և նրանք կկարողանան այս համընդգրկուն ու ծավալուն բնագավառին առնչվող բոլոր խնդիրները բարձրաձայնել և փորձել գտնել լուծումներ: Ի վերջո, «Հասարակագիտությունը» այն միակ առարկան է, որը կրթում և դաստիարակում է ապագայի քաղաքացուն, ով պետք է դիմակայի աշխարհի վայրիվերումներին ու համահունչ քայլի դարի հետ: Ուստի կարծում ենք, որ մենք ուսուցիչներս ևս պետք է համընթաց քայլենք, չդադարենք

ինքնակրթվել, 15 տիրապետենք ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, որպեսզի հագեցած դասի արդյունքում կարողանանք հասնել ցանկալի վերջնարդյունքին, քանզի այս ինֆորմացիոն դարում պետք է ճիշտ կողմնորոշվել, պետք է լինել քննադատաբար ստեղծագործող, դիրքորոշված, պատասխանատու, պրպտող, կշռադատող,ազգային և համաշխարհային արժեքներ կրող քաղաքացի:

Օգտագործված գրականություն

1. Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ

2. Վ.Պետրոսյանի մտորումներ

3. Սերոբ Խաչատրյան՝ «Ուսուցման արդյունավետ հնարներ» 2020 թ. Երևան

4. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ,

5. Մեջբերումներ՝ Քրիստին Չինի, Լաո Ցզիի, Դավիթ Անհաղթի մտքերից